

1048

Բ. ԿԱՇՅՈՅԱՆ

338.98:62.552

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ

ՅԵՎ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

352

Դ-28

ՅԵՐԵՎԱՆ—1931

39.700

352 28 MAR 2013
7-28

1 MAR 2010

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1523
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6195 (Բ)
ՏԻՐԱԺ 5000 ՊԱՏՎԵՐ 886

Р. ДАШТОЯН

**Весенняя и задачи
сельсоветов**

1. ՀԱՊԱՄՅԱԿԻ ՅԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Սոցիալիստական շինարարությունը ամբողջ խորհրդային Միության մեջ չտեսնված բուռն թափով առաջ է ընթանում: Բանվոր դասակարգը բազմաձև խոնաչխատավոր դյուղացիության հետ վերջին տարիներում բացառիկ հաջողություններ է ձեռք բերել յերկրի ինդուստրացման և դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Որեցոր աճում է մեր արդյունաբերությունը, կառուցվում են նորանոր հսկայական գործարաններ ու ֆաբրիկներ, բանվորների թիվն այս վերջին տարիների ընթացքում կրկնապատկվել է, նրանց նյութական դրությունն անհամեմատ լավացել է, կուլտուրական մակարդակն ու քաղաքական ակտիվությունն աճել: Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում՝ Յեվրոպայում և Ամերիկայում արդյունաբերությունը հետզհետե կրճատվում է, յերբ գործազուրկ բանվորների թիվն այնտեղ 30 միլիոն մարդուց ավելի յե, մեզ մոտ, խորհրդային Միության մեջ գործազուրկությունը հիմնականում վերացել է: Սա աշխարհիս յերեսին չտեսնված մի բան է: Զի յեղել է չկա մի յերկիր, բացի խորհրդային Միությունից, վորտեղ գործազուրկներ չլինեն: Մեր արդյունաբերության արտադրանքը հնգամյակի առաջին յերկու տարում աճել է 52 տոկոսով, այն ինչ հնգամյա

պլանի համաձայն նախատեսվում էր ավելացնել միայն 47 և կես տոկոսով: Ծանր արդյունաբերության արտադրանքը 68 տոկոսի փոխարեն աճել է 78 տոկոսով:

Որոշոր են մեր հաջողութիւնները նաեւ գյուղատնտեսութեան վերակառուցման ասպարիզում: Աշխատավոր գյուղացիութիւնը բանվոր դասակարգի ղեկավարութեամբ սկսել է վերակառուցել իր տնտեսութիւնը սոցիալիստական հիմունքներով: Հնգամյակի յերկրորդ տարվա վերջին (1930 թվի դեկտեմբերին) կոլեկտիվացման են յենթարկվել Ուրարդային Միութեան բոլոր գյուղացիական տնտեսութիւնները մոտ 25 տոկոսից ավելի, իսկ հացահատիկային շրջաններում՝ մոտ 50 տոկոսը: Հայաստանում կոլեկտիվացման են յենթարկվել ամբողջ գյուղացիութեան 12 տոկոսից ավելին, իսկ բամբակացան շրջաններում՝ մոտ 25-30 տոկոսը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա մենք անցել ենք կուլակի, վորպես դասակարգի, լիկվիդացիային, արմատախիլ անելով կապիտալիզմի հիմքերը մեր յերկրում:

Տնտեսական հզորացման հետ միասին մենք հնարավորութիւն ենք ստացել խոշոր չափով առաջ տանել մեր յերկրում նաեւ կուլտուրական հեղափոխութիւնը, ձեռնարկել ենք ընդհանուր պարտադիր ուսման:

Հաղթական կերպով առաջ ե գնում սոցիալիզմի ծավալուն ընթացքը բոլոր Փրոնտներում: Արդեն լրացավ յերկու տարին այն որից, յերբ Ուրարդային Միութիւնը փսնց իր սոցիալիստական շինարարութեան հնգամյա պլանի իրականացումը: Յերբ կոմունիստական կուսակցութիւնը և բանվոր դասակարգը ձեռնարկեցին հնգամյա պլանի իրագործմանը, մեր դասակարգային թըշ-

նամիները թե յերկրի ներսում և թե կարմիր սահմաններից դուրս ծաղրանքով եյին վերաբերվում և համայն պլանը համարում եյին յերեւակայական, անիրագործելի մի բան: Դժբախտաբար վոչ միայն մեր թշնամիները, այլ նաեւ աշխատավորութեան առանձին վորոշ խավերը և նույնիսկ առանձին կուսակցական ընկերներ կասկածով և թերահավատութեամբ եյին վերաբերվում ղեպի հնգամյա պլանը. նրանք չեյին հավատում, թերագնահատում եյին բանվոր դասակարգի ստեղծագործող ուժերն և հեղափոխական վոգեվորութիւնը: Սակայն անցած այս յերկու տարվա հաջողութիւններն այնքան խոշոր են, այնքան ակնեղելի, վոր նույնիսկ մեր դասակարգային թշնամիները ստիպված են այդ խոստովանելու: Այդ հաջողութիւնների շնորհիվ մենք ամբողջ պլանը հինգ տարվա փոխարեն իրագործելու յենք չորս տարում:

Անցած այս յերկու տարիները հերոսական ու համառ պայքարի տարիներ եյին, վոր աշխատավորական մասսաները մղում եյին սոցիալիզմի ճանապարհը հարթելու, բազմաթիւ խոչընդոտները հաղթահարելու, կուլակին և բոլոր տեսակի հակահեղափոխականներին և փնասարարներին ջախջախելու համար:

Սոցիալիստական շինարարութեան այսպիսի հաղթական ընթացքի հետեւանքով ծայր աստիճան սրվել է դասակարգային պայքարը: Վորքան ամբողջում և հզորանում է Ուրարդային Միութիւնը, այնքան ավելի կատաղում ու զազաղում են մեր դասակարգային թըշնամիները թե յերկրի ներսում և թե կապիտալիստական յերկրներում: Կուլակը, նեպոմանը, դաշնակը, մենշևիկը, դանադան տեսակի հակահեղափոխականներն ու

վնասարարները լարում են իրենց բոլոր ուժերը մեր հանդեպ առաջնությունը խանգարելու համար:

Մերանց ողջում են ոպորտունիստները, աջ և «ձախ» թեքման կողմնակիցները, վախկոտներն ու թուլամորթները, վորոնք թերահավատությամբ են վերաբերվում դեպի բանվոր դասակարգի ստեղծագործող ուժերը:

Սակայն ինչպես դասակարգային թշնամու, նույնպես ոպորտունիստների բոլոր փորձերը հանդիպելով բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների կազմակերպված ուժին, ջախջախվում են: Վորքան նրանք աշխատում են խանգարել, այնքան մեծ յեռանդով առաջ և տարվում սոցիալիզմի կառուցումը, այնքան ավելի աճում ու հզորանում և խորհուրդների յերկիրը տնտեսապես, այնքան ավելի բարձրանում և նրա պաշտպանունակությունը:

2. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՐԴՆԵՐԻ ԶԵՐԹԱՎԱՆ ԽՆԴԻՆԵՐԸ

Հսկայական այս շինարարություն մեջ խոշոր դեր են կատարել մեր խորհուրդները: Խորհուրդների դերը ել ավելի կարեւոր և դառնում մանավանդ այժմ, յերբ կոմունիստական կուսակցության գեկավարությամբ մենք անմիջականորեն ձեռնարկել ենք գյուղացիական տնտեսության վերակառուցմանը սոցիալիստական հիմունքներով և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակին վորպես դասակարգի վերացնելու գործին:

Անցյալ տարի գարնանը, յերբ մեզ մոտ ծավալվեց կոլեկտիվ շարժումը, շատերը կարծում եին, թե խորհուրդներն այլևս ավելորդ բաներ են, և կարելի յե նր-

անց վերացնել: Ինչ կասկած, բոլոր այդ տեսակ խոսակցությունները գյուղխորհուրդները վերացնելու և կամ նրանց ղեկավարող դերը թուլացնելու մասին հակախորհրդային են և իրանց հիմքում կուլակին և մեր դասակարգային թշնամիներին են ձեռնտու: Ընդհակառակը, մենք պետք և ամեն կերպ աշխատենք ամրացնել և ուժեղացնել գյուղխորհուրդները և ել ավելի աշխուժացնել նրանց աշխատանքները:

Գյուղական խորհուրդները մեր իշխանություն ստորին մարմիններն են: Նրանք կազմակերպում են իրանց շուրջը բատրակա-չքավորական և միջակ գյուղացիներին գյուղի սոցիալիստական վերակառուցման համար: Կոլխոզները պետական մարմին չեն, նրանք արտադրական միավորություններ են և չեն կարող փոխարինել խորհուրդներին:

Գաղտնիք չե, վոր մեր գյուղխորհուրդների զգալի մասի ամենախոշոր պակասություններից մեկն այն և, վոր նրանք մինչեւ այժմ բավարար չափով չեն կարողացել կազմակերպել աշխատավորական մասսաներին իրենց շուրջը, թույլ են մասնակցել գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին: Այն ինչ նրանք սոցիալիստական այս հսկա շինարարության շրջանում չպետք և յետ մնան սոցիալիստական շինարարության այն բուռն թափից, վոր ծավալվել և մեր ամբողջ յերկրովը մեկ:

Գյուղխորհուրդները վորպես գյուղացիության ամենամոտ կանգնած իշխանության մարմինները և վորպես գյուղացիության ինքնագործունեությունը կազմակերպողներ, իրանց աշխատանքի թե բովանդակություն-

նը և թե՛ ձեռքերն ու մեթոդները պետք է հարմարեցնեն կյանքի նոր պահանջներին, հասկապես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրներին։ Արամբ իրենց յեղեղը պետք է դարձնեն դեպի կոլտոզչինարարությունը, ինչպես քաղաքի խորհուրդներն իրենց յերեսը դարձնում են դեպի արտադրությունը։

Գյուղխորհուրդները, վորպես գյուղի բարձր իշխանություն, պետք է զբաղվեն այն բոլոր հարցերով, վորոնք նպաստում են աշխատավորների տնտեսական և կուլտուրական կյանքը բարձրացնելուն և իրանց շուրջը համախմբելով գյուղի բոլոր աշխատավորներին, մասնակից անեն նրանց խորհրդային շինարարությանը։ Գյուղխորհուրդը պետք է պլանավորի գյուղի ամբողջ տնտեսական-կուլտուրական կյանքը. կոլեկտիվ տնտեսություն, հողաշինարարություն, ջրաշինարարություն, գարնանացան և աշնանացան, կուլտուրական և կենցաղային հարցեր—գարուց, հիվանդանոց, խրճիթ-ընթերցարան և այլ հարցեր—ահա այս բոլոր հարցերով պետք է զբաղվի գյուղխորհուրդը և վոչ միայն զբաղվի, այլ և այդ բոլոր հարցերը նա պետք է այնպես վճռի, վորպեսզի նրանք բոլորը ծառայեն ու նպաստեն մեկ դերադույն նպատակի—գյուղատնտեսության վերակառուցմանը սոցիալիստական հիմունքներով։ Ահա թե ինչ է նշանակում աշխատանքի ձեռքերն ու մեթոդները փոխել, ահա թե ինչ է նշանակում յերեսը դարձնել դեպի կոլտոզչինարարությունը։

Իրանց վրա դրած այս խոշոր պարտականությունները գյուղխորհուրդները կարող են կատարել միայն այն

ժամանակ, յեւր նրանք անշեղորեն կհատարեն կուսակցության և խորհրդային իշխանության ճիշտ քաղաքականությունը, առաջ կտանեն նրանց հիմնական դիրքը։ Իսկ կուսակցությունը և խորհրդային իշխանությունը պահանջում են գյուղխորհուրդներից գլխավորել ու ղեկավարել կոլտոզչինարարությունը, ամեն կերպ աջակցել նրան, կազմակերպել չքավորական մասսաներին և ամրացնել նրանց դաշինքը միջակ գյուղացիության հետ, կոլխոզնիկին, չքավորին և միջակ գյուղացուն կազմակերպել կուլակի և դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար։

Ուրեմն խորհուրդներից պահանջվում է լինել կուսակցության ճիշտ քաղաքականության կիրառողները գյուղում և սոցիալիստիկ ինչպես դասակարգային քչնաժու, նույնպես և կուսակցության հիմնական գիծը խեղաթյուրողների՝ այս պարտունիստների և «ձախ» բյալապոզիտների դեմ։

3. ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻՅԻ ՍԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջիկա գարնան գյուղատնտեսական կամպանիայի նպատակն է բարձրացնել մեր գյուղատնտեսությունը և առաջին հերթին ուժեղացնել նրա սոցիալիստական վերակառուցման քափը։ Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի այդ առթիվ ընդունած վորոշման մեջ ասված է. «1931 թվականի գարնան գյուղատնտեսական կամպանիայի կենտրոնական խնդիրն է՝ ամրացնել ձեռք բերված հաջողու-

թյունները և ե՛լ ավելի առաջ գնալ գյուղատնտեսու-
թյան սոցիալիստական վերակառուցման ուղիով»:

Այս կենտրոնական խնդիրն իրագործելու համար
անհրաժեշտ է.

ա) ամրացնել և ուժեղացնել գոյություն ունեցող
կոլտնտեսությունները.

բ) ներգրավել կոլտնտեսությունների մեջ նորանոր
չբավոր և միջակ տնտեսություններ.

գ) ավելացնել ցանքերի տարածությունները թե
կոլտնտեսություններում և թե անհատական սեկտորում.

դ) հատուկ ուշադրություն դարձնել տեխնիկական
բույսերի և մանավանդ բամբակի մշակութիւնների վրա.

ե) բարձրացնել բերքատուլությունը.

զ) զարկ տալ անասնաբուծության դարգացմանը:

Խորհրդային Հայաստանի կառավարութեան ընդու-
նած ծրագրի համաձայն այս 1931 թվականի գյուղա-
տնտեսական կամպանիայի միջոցին պետք է աշխատել
կոլեկտիվացման յենթարկել չբավոր և միջակ տնտեսու-
թյունների 20-25 տոկոսը, իսկ բամբակացան չրջանե-
րում՝ մոտ 50 տոկոսը:

Ցանքերի տարածությունը անցյալ դարնան հետ հա-
մեմատած պետք է ավելանա մոտ 27 տոկոսով: Անցյալ
դարնան ամբողջ Հայաստանում ցանված եր մոտ 267 հա
դար հեկտար, իսկ այս տարի պետք է ցանվի 338 հադար
հեկտար: Այս տարածությունից կոլտնտեսությունները
ցանելու յեն 102 հադար հեկտար, խորհրդային անտե-
սությունները՝ մոտ 11 հադար հեկտար, այսինքն Հա-
յաստանի ցանքերի ամբողջ տարածության ուղիղ մեկ
յերրորդը (33 տոկոս) ցանելու յե սոցիալիստական
հատվածը:

Մեր գործարաններին հումութ տալու նպատակով,
այնտեղ, վորտեղ հնարավոր է, պետք է առավելագույն
չափով ընդարձակենք տեխնիկական բույսերի (բամբակ,
ծխախոտ, կտավատ և այլն) ցանքերը: Բամբակի
ցանքերի տարածությունը մոտ 17 հադար հեկտարից
այս տարի պետք է հասցնենք 25 հադար հեկտար, ութ
հարյուր հեկտար ծխախոտի դիմաց այս տարի պետք է
ցանվի մոտ յերկու հադար ութ հարյուր հեկտար:

Անասնապահության զարգացումն ապահովելու հա-
մար անհրաժեշտ է ընդարձակել այնպիսի բույսերի մը-
շակությունը, վորոնք ծառայում են վորպես անասուն-
ների կեր: Այդպիսիներն են ցանովի խոտերը, վորոնց
տարածությունը անցյալ տարվա 5-6 հադար հեկտարի
դիմաց այս տարի պետք է ընդարձակվի մինչև քսան
հադար հեկտար, կերի արմատապտուղների տարածու-
թյունը հինգ հարյուր հեկտարից պետք է հասնի հինգ
հադար հեկտարի, սիլոսի բույսերը՝ մոտ հինգ հադար
հեկտար և այլն:

Գաղնան գյուղատնտեսական կամպանիայի հետեւի-
յալ կարելիորագույն խնդիրն է լինելու բերքատուլու-
թյան բարձրացումը: Ըստ ընդունած ծրագրի այս տարի
բերքատուլությունը ամբողջ Հայաստանում, համեմա-
տած անցյալ տարվա հետ, պետք է բարձրանա 11 տո-
կոսով, իսկ բամբակի ցանքի յուրաքանչյուր հեկտարից
պետք է ստացվի միջին հաշվով վոչ պակաս, քան 11
ցենտներ (67 փութ) բամբակ:

Անասնաբուծությունը մեզ մոտ խոշոր տեղ է գրա-
վում գյուղատնտեսության մեջ, սակայն նա զտնվում է
բավական ցածր աստիճանի վրա: Այս տարի խոշոր ու-

չաղբութիւնն պետք է դարձնենք թե անասունների թիվը չատացնելու և թե նրանց տեսակը չալացնելու հարցերին: Կոլեկտիվացումն առանձնապես թույլ է անասնաբուծական շրջաններում: 1931 թիվը պետք է գրեկման տարի հանդիսանա անասնաբուծութիւնը սոցիալիստական հիմքերի վրա բարձրացնելու հարցում: Այս նպատակով անհրաժեշտ է անասնապահական շրջաններում ավելի լայն չափով չքավոր և միջակ տնտեսութիւններ ներդրավել անասնաբուծական կոլտնտեսութիւնները:

Բացի այդ, այս տարի խոշոր չափով աճելու յե նաև անասնաբուծական խորհրդային տնտեսութիւնների թիվը: Բացի գոյութիւն ունեցողներից այս դարնանը ծրագրվում է կազմակերպել մի շարք նոր խորհրդային անասնաբուծական տնտեսութիւններ մոտ իննը հազար գլուխ խոշոր յեղջուրավոր անասուններով, քսան հազար գլուխ վոլխարով և հինգ հազար գլուխ խոզերով:

Ինչպես տեսնում ենք, առաջիկա դարնանացանի ընթացքում ծրագրվում են չափազանց խոշոր ձեռնարկումներ, վորոնք պետք է վճռականորեն նպաստեն մեր գյուղատնտեսութիւնի վերելքին և նրա սոցիալիստական վերակառուցմանը: Ակներեմ է, վոր այս խոշոր, իսկապես բայլելիկյան ծրագիրը հնարավոր է իրագործել միմիայն աշխատավորների ամենալայն ու ակտիվ մասնակցութեամբ:

Պետք է գյուղացիական մասսաների ամբողջ ուշադրութիւնն այժմյանից կենտրոնացնել դարնանացանի խնդիրների շուրջը, իսկ այդ պարտականութիւնները ընկնում են առաջին հերթին գյուղխորհուրդների վրա: Նրանք պետք է լինեն գյուղատնտեսական կամպանիայի

մշտական կազմակերպողները, նրանք պետք է գլխավորեն գյուղի սոցիալիստական վերակառուցման բոլոր աշխատանքները, նրանց վրա յե ծանրանում խորհրդային իշխանութիւնի վարած տնտեսական քաղաքականութեան այս ամենակարեւոր խնդիրներից մեկը:

Գյուղխորհուրդը պետք է լինի գարնանացանի աշխատանքները ղեկավարող գլխավոր շտաբը: Նա ամբողջ տոկոսնութեամբ ու թափով, առանց թերանալու, կազմակերպորեն ընդգրկելով բոլոր աշխատանքները, համախմբելով իր շուրջը գյուղի ամբողջ աշխատավորութիւնը, պայքարելով կուլակի բոլոր վտանգութիւնների դեմ, պետք է առաջ տանի և հաջող ավարտի բայլելիկյան 2-րդ դարնանացանի աշխատանքները, լավ հիշելով, վոր գարնան գյուղատնտեսական կամպանիայի պլանի կատարման պատասխանատվութիւնը տվյալ գյուղում առաջին հերթին ընկնում է գյուղխորհուրդների վրա:

4. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՄԼԵԿՏԻՎՍՑՄԱՆ ՍԱՐՏԱԿԱՆ ԾՏԱՐԸ ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ

Ինչպես ասվեց, դարնան գյուղատնտեսական կամպանիան անցնելու յե գյուղատնտեսութիւնի սոցիալիստական վերակառուցման նշանաբանի տակ:

Ի՞նչ է նշանակում այդ, և ինչո՞ւ յե այդպես:

Գաղտնիք չէ, վոր մեր յերկիրը մինչև այժմ յեղել է հետամնաց, հետամնաց վոչ միայն իր գյուղատնտեսութեամբ, այլ և իր տեխնիկայով: Հայտնի յե, վոր թե արդյունաբերութիւն և թե գյուղատնտեսութիւն դարձագոյն համար անհրաժեշտ են մեքենաներ: Մեքենաներ

լի խոշոր արտադրութեան բացակայութեամբ Խորհրդային Միութեան մեջ արգելք է հանդիսացել արդյունաբերութեան և մանավանդ գյուղատնտեսութեան զարգացմանը։ Այս դրութեանից դուրս գալու միակ միջոցը յերկրի ինդուստրացումն է, այսինքն՝ մեքենաներ արտադրող խոշոր արդյունաբերութեան զարգացումը, վոր մեր կուսակցութեանը հաջողութեամբ իրագործում է վերջին տարիներէ ընթացքում։

Յերկրի ինդուստրացման հաջող զարգացման շնորհիվ է, վոր գյուղացիութեան չքավորամիջակային խավերը հնարավորութեան են ստացել հեղափոխելու իրանց գյուղացիական տնտեսութեանը։ Մեքենաների շնորհիվ գյուղացիութեան իր հողամշակութեան հնամանդ պապական ձեւերից անցնում է նոր ձեւերի։ Պապական հին արորը հետզհետե փոխարինվում է գութանով և տրակտորով։ Մեր հսկայական տրակտոր արտադրող գործարանները առաջիկա 2-3 տարում յերկրին տալու յեն յերեք հարյուր հազարից ավելի տրակտորներ։ Այս տարի Հայաստանում տրակտորների թիվը հասնում է մոտ հինգ հարյուրի։ Մեքենան և հողամշակութեան նոր ձեւերը միայն կարող են բարձրացնել աշխատանքի արտադրողականութեանը։ Սակայն գյուղատնտեսութեան զարգացմանը խանգարում է վոչ միայն մեքենաների բացակայութեանը, այդ բանին հիմնական արգելք է հանդիսանում նաև գյուղացիական տնտեսութեան մանրութեան ու ցրվածութեանը։ Մանր գյուղացիական տնտեսութեան մեջ ընտանիքի բոլոր անդամները մեծից մինչև փոքր որնիբուն աշխատում են, ահագին ջանք են գործ դնում, բայց չնչին

արդյունք ստանում։ Փոքրիկ տնտեսութեան մեջ չի կաթելի գործադրել խոշոր ու բարդ գյուղատնտեսական մեքենաներ։ Անհատական, մանր տնտեսատերը չի կարող ձեռք բերել աշխարհի մեքենաներ միայն իր ուժերով։ Մանր տնտեսութեանների պայմաններում գյուղատնտեսութեանը զարգանալ չի կարող, ընդհակառակը, նա արգելք է դառնում գյուղացու աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, հետեւյալս և գյուղատնտեսութեան զարգացման համար։ Այս դրութեանից դուրս գալու համար յեւքը գյուղատնտեսութեան կոլեկտիվացումն է։ Մանր գյուղացիական տնտեսութեանները միանալով ստեղծվում են խոշոր, կոլեկտիվ և ուժեղ տնտեսութեաններ, վորտեղ հնարավոր է և մեքենաների գործադրութեան, և գյուղատնտեսական նոր ձեւերի կիրարկում, և կոլեկտիվ աշխատանք, վորոնց շնորհիվ ավելանում է աշխատանքի արտադրողականութեանը և բարձրանում է աշխատավոր մասսաների բարեկեցութեանը։ Գոյութեան ունեցող կոլեկտիվ տնտեսութեանները սրան կենդանի ապացույցներ են։

Չքաւոր և միջակ գյուղացիները հասկացել են արդեն, վոր միայն կոլեկտիվ տնտեսութեաններ կադմակերպելով կարող են իրականում իրանց կյանքը բարելավել։ Գյուղատնտեսութեան կոլեկտիվացումը դա նշանակում է գյուղացիական մանր և ցրված տնտեսութեանները վերակառուցել սոցիալիստական ուղղութեամբ։

Չքաւոր և միջակ գյուղացիներին ձեռնառու չե, վոր մեր յերկրը զարգանա կապիտալիստական ճանապարհով, վորովհետեւ այդ ճանապարհը տանում է դեպի

նրանց տնտեսութեան քայքայում: Կապիտալիստական ծանապարհն իր հետ բերում է գործադրկություն, գյուղի տնտեսական և կուլտուրական հետամնացություն, աղքատություն և թշվառություն և բազմաթիվ այլ չարիքներ:

Կապիտալիստական մանապարիքն սեռնուս յե միայն կուլակին, վորովհետև նա կապիտալիստական կարգերում անսահման հնարավորություն է ստանում շահագործելու գյուղացիութեան լայն մասսաներին: Այս պատճառով է կուլակը կատաղի դիմադրում կուլեկտիվացմանը: Իսկ սոցիալիստական մանապարիքը—գյուղատնտեսութեան կոլեկտիվացումը վնչ միայն չի քայքայում չքավորի և միջակի տնտեսութեան, այլ ընդհանրապես վերականգնելով նրանց տնտեսութեանը սոցիալիստական հիմունքներով, խոշոր ագրակ ե դառնում գյուղատնտեսութեան և գյուղացիների տնտեսական կուլտուրական կյանքի հառաջադիմութեանը:

Այս է պատճառը, վոր կոմունիստական կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը նպատակ են դրել այս գարնան կամպանիայի ընթացքում ել ավելի մասսայականացնել կուլեկտիվացման գաղափարը չքավոր ու միջակ գյուղացիների մեջ, ել ավելի լայն տարածել կուլեկտիվ տնտեսութեան բոլոր առաջնությունները, ներգրավել հազարավոր և տասնյակ հազարավոր չքավոր և միջակ գյուղացիներ դեպի կոլխոզները: Այստեղից ել գյուղխորհուրդների առաջ դրվում է—կազմակերպել բայլչեվիկյան դարնանացանը, հիմք ունենալով գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը: Վնչ միայն նպատակ է կոլտնտեսութեանը, երբեք, այլ և վորպես խորհրդային իշխանութեան ստո-

րին բլիշներ, վորպես անմիջականորեն գյուղացիական մասսաների հետ կապված պրոլետարական պետութեան սրբաններ, կազմակերպել ու դեկավարել կուլեկտիվ շարժումը: Հայտնի չէ, վոր մեր գյուղխորհուրդների մեծամասնութեանը մինչև այժմ չի անցել կուլեկտիվ շարժման գլուխը: Գյուղխորհուրդները այս գարնան կամպանիայի ընթացքում պետք է վնասկանապես իրանց յերեսը դարձնեն դեպի գյուղի կոլեկտիվացումը:

Առաջին հերթին խորհուրդները պետք է նպատակ դնեն ամրացնել գյուղում գոյութեան ունեցող կոլտնտեսութեանները: Մեզ հարկավոր է, վորպեսզի կոլտնտեսութեանները տնտեսապես ուժեղ և կազմակերպորեն ամուր լինեն: Անհրաժեշտ է, վոր կոլտնտեսութեան մեջ համայնացված լինեն արտադրութեան հիմնական գործիքներն ու միջոցները, վոր կոլտնտեսութեան իրապես բարձրացնի բերքատվութեանը, ավելացնի ցանքսերի տարածութեանը, դարձացնի անասնապահութեանը, լավ և ճիշտ կազմակերպի աշխատանքը, կատարի իր պարտականութեանը դեպի պրոլետարական պետութեանը, ճիշտ և կուսակցութեան դերեկալիքների համեմատ կարգավորի իր փոխադարձ հարաբերութեաններն անհատական, չքավոր և միջակ տնտեսութեանների հետ և այլն:

Սակայն պետք է ընդգծել, վոր մեր գյուղխորհուրդների մեծամասնութեանը այս խնդիրներով չի զբաղվում, այդ խնդիրները իրանը չի համարում: Զի հետաքրքրվում, թե ինչպես են ծախսում կոլտնտեսութեանները պետութեանը, պրոլետարատեանը, վորքան նպատակահարմար է իրենց կողմից վատնվում նրանց շենքերը, վոր չափով նրանց արտադրական պլանները համապա-

տասխանում են իշխանության տված հրահանգներին, վոր չափով նրանք մասնակցում են տնտեսական կամ-պանիաների, հացամթերմանը և այլն:

Գյուղխորհուրդը պետք է հսկի, վորպեսզի ստիպո-ղաբար չհամայնացվեն բնակելի շենքերը, մանր ա-նասունները, թուռնները, փոքրիկ բախշաները և այլն: Մեկ խոսքով՝ չպետք է թույլ տալ վոր կրկնվեն անցյալ տարվա սխալները, «ձախ» քյալլագյոզությունները, վորոնք վոչ թե նպաստում են կոլտնտեսական շարժա-նը, այլ փաստորեն վարկաբեկում են կոլեկտիվացման դադափարը և աղավաղում կոմունիստական կուսակցու-թյան քաղաքականությունը: Պայքարելով «ձախ» քյալ-լագյոզությունների դեմ, չպետք է ընկնել, սակայն, հակառակ ծայրահեղության, աջ ոպորտունիստական թեքման մեջ: Ներկայումս գլխավոր վտանգը մեր կու-սակցության մեջ համարվում է աջ թեքումը:

Սոցիալիստական շինարարության ընթացքում հան-դիպած դժվարությունները վախեցնում են աջերին, նրանք չեն ուզում հասկանալ, վոր այդ դժվարություն-ները աճման դժվարություններ են, վոր նրանք ժամա-նակավոր, անցողիկ դժվարություններ են, և վոր նը-րանց պետք է հաղթահարել և վոչ թե նրանց առաջ ընկնել: Կուսակցությունն ասում է թե պետք է ուժեղ թափով գարդացնել արդյունաբերությունը և առաջին հերթին ծանր արդյունաբերությունը, թե պետք է լայ-նացնել ցանքսերի տարածությունը, բարձրացնել բեր-քատվությունը և ամբողջ վճռականությամբ առաջ տա-նել կոլտոգչինարարությունը, իսկ աջ թեքման կողմնա-կիցներն աշխատում են խանգարել այդ, ցանկանում են թուլացնել սոցիալիզմի դարգացման թափը: Եթե մենք

դնայինք աջերի առաջարկած ճանապարհով, այժմ չե-լինք ունենալ վոչ այն հաղթանակները, վոր ունենք յերկրի ինդուստրացման ասպարիզում, և վոչ ել գյու-ղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիզում:

«Ձախ» թեքման կողմնակիցները ցանկանում են իրենց ավելի «հեղափոխական» ներկայացնել, նրանք ավելի առաջ են վազում, ընկնում են հակառակ ծայ-րահեղության մեջ և դրանով վտանգում են միջակի դաշինքը չքավորության հետ: «Ձախ» քյալլագյոզների սխալները հարմար հող են ստեղծում աջ թեքման կողմնակիցների համար: Այլերը ոգտվելով «ձախերի» սխալներից, ուժեղացնում են իրենց հարձակումը կուսակցության ճիշտ գծի դեմ: Պարզ է, վոր այդ յերկու թեքումների դեմ ել պետք է վճռական պայ-քար մղել կենտրոնացնելով կրակը աջերի դեմ: Այդ պայքարի շնորհիվ է, վոր բանվոր դասակարգը և կու-սակցությունը այսպիսի հաղթություններ են ձեռք բե-րել:

Կոլեկտիվացման հաջողությունը կախված է մեծ չափով նրանից, թե վոր չափով գյուղխորհուրդները կկարողանան իրենց աշխատանքները հարմարեցնել ներկայիս պահանջներին և դառնալ գյուղի ամբողջ քաղաքական և տնտեսական կյանքի և առաջին հեր-թին կոլեկտիվ շարժման ղեկավարը: Համաժխտելե-նական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնա-կան Կոմիտեյի վորոշումներից մեկի մեջ ասված է հետևյալը. «Անհրաժեշտ է ուժեղացնել խորհուրդների ղեկավարող դերը՝ կոլեկտիվների վերաբերմամբ, ան-հրաժեշտ է բարձրացնել խորհուրդների պատասխա-

նառավաբայունը՝ կոլեկտիվ շինարարության համար, օրստեմ դարձնել, վորպեսզի կոլտնտեսութունները հաշվետու լինեն խորհուրդների առաջ, առանց, իհարկե, թույլ տալու, վոր խորհուրդները խառնվեն կոլտնտեսութունների առարկա մանր-մունր հարցերի մեջ և կամ վարչական միջամտություն ունենան նրանց գործում»:

Մինչև այս (մինչև 1930 թիվը) գյուղխորհուրդների կանոնադրության մեջ խորհրդի գերը կոլեկտիվ շարժման վերաբերմամբ վորոշվում եր այն իմաստով, վոր «Խորհուրդը աջակցում է կոլեկտիվացմանը»: Այս վորոշումը ներկայիս պայմաններին չի համապատասխանում, նա հնացած է: Սոցիալիստական վերակառուցման ներկա բուռն շրջանում գյուղխորհուրդը չի կարող կոլեկտիվացման լոկ «աջակցողը» լինել: Համամիութենական կենտգործկոմի մշակած նոր կանոնադրության համաձայն «գյուղխորհուրդը, վորպես պրոլետարական դեկտատուրայի որդանը գյուղում, հանդիսանում է լայն ծավալված գյուղատնտեսության կոլեկտիվացման և դրա հետ կապված կուլակի, վորպես դասակարգի լիկվիդացիայի գործի ղեկավարը, ինչպես և բառրակ-չքավորական և միջակ մասսաների ակտիվության կազմակերպիչը՝ գյուղատնտեսության վերելքի և նրա սոցիալիստական վերակառուցման գործում»: Ուրեմն նոր որենքի համաձայն կոլեկտիվ շարժման, ինչպես և գյուղում գործող մյուս բոլոր կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների ղեկավարությունը գյուղում գրվում է գյուղխորհուրդների վրա: Նոր կանոնադրության համաձայն գյուղխորհուրդները պետք է պարբերաբար լսեն կոլ-

տնտեսութունների հաշվետու պեկուցումները, քննեն և հաստատեն նրանց պլանները, ցուցմունքներ տան զլանը փոփոխելու մասին, յեթե նրանք չեն համապատասխանում իշխանության տված դիրեկտիվներին և արտադրական պատվերներին, տան իրենց յեզրակացությունը ստանալիք վարկերի մասին և այլն: Սակայն այս բոլորն ի հարկե, իրավունք չի տալիս գյուղխորհուրդներին խառնվել կոլտնտեսության ամենորյա մանր-մունր գործերի մեջ:

5. ԳՅՈՒՆԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ ՄԱՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Ինչպես տեսանք, կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը խոշոր պարտականություններ են դնում գյուղխորհուրդների վրա: Գյուղխորհուրդները պետք է լինեն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ղեկավարները և բառրակ-չքավորական և միջակ գյուղացիական մասսաների կազմակերպիչները: Այս խոշոր պարտականությունները գյուղխորհուրդները կկարողանան կատարել այն դեպքում, յերբ պատշաճ բարձրության վրա դնեն իրանց մասսայական աշխատանքները: Մեր խորհրդային մարմինները նրանով են տարբերվում բուրժուական յերկրների իշխանության մարմիններից, վոր նրանք պետության կառավարչության ամենորյա աշխատանքներին մասնակից են անում բանվորների և գեղջկուհիների լայն մասսաներին: Ընկ. Լենինը այս հարցին խոշոր նշանակություն էր տալիս: «Մեզ համար կարեւոր է—գրում էր նա—վոր պետության կառավարությունը մասնակից դառնան բոլոր աշխատա-

վորները: Սոցիալիզմը չի կարող իրականացնել միմյանս կուսակցութեան փոքրամասնութիւնը: Սոցիալիզմը կարող են իրականացնել տասնյակ միլիոնավոր մարդիկ, յերբ նրանք կսովորեն ամեն ինչ իրենց ձեռքով անել: Պետութիւնն ուժեղ է, յերբ մասսաները գիտակից են: Նա հզոր է այն ժամանակ, յերբ մասսաները ամեն ինչ գիտեն, ամեն ինչի մասին կարող են դատել և ամեն ինչ գիտակրացար են կատարում»:

Սակայն պետք է խոստովանել, վոր գյուղխորհուրդները մինչև այժմ ել դեռևս չեն կարողացել իրանց բարձրութեան վրա դնել մասսայական աշխատանքները, վորոնք մանավանդ այժմ, գյուղի սոցիալիստական վերակառուցման շրջանում ավելի խոշոր կարեւորութիւն են ստանում: Գյուղխորհուրդների սեկցիաները, վորոնք մասսայական աշխատանքի ամենալավ ձեւերից մեկն են, շատ տեղերում դուրս են գնում ձեւականորեն և անգործութեան են մատնւած: Գյուղխորհուրդները չեն հսկում նրանց աշխատանքներին, չեն դեկլարում նրանց, վորի հետեւանալով սեկցիաների մեծամասնութիւնը անգործութեան են մատնւում, իսկ յեթե գործում ել են, ապա անձրագիւր, պատահական կերպով: Այն ինչ սեկցիաների միջոցով է, վոր գյուղական ակտիվը կարող է մասնակից լինել խորհուրդների ամենորոյա գործնական աշխատանքներին: Շատ գյուղերում լավ չեն աշխատում նաև իրանք գյուղխորհուրդները: Շատ անգամ խորհրդի նախագահն ու քարտուղարը կամ, ամենալավ դեպքում, խորհրդի նախագահութիւնը վճռում են բոլոր հարցերը, իսկ խորհրդի մնացած անդամները չեն մասնակցում աշխատանքներին, չեն սովորում կոլեկտիվ աշխատանքի:

Մասսայական աշխատանքների հիմնական և կարեւոր խնդիրներից մեկը—դա բարտալ—չքաղութական խմբակների և չքաղութական խորհրդակցութիւնների աշխատանքն է, վոր շատ անգամ անտես են առնում գյուղխորհուրդները:

Ջրավորական խմբակներ, սեկցիաներ, արտագրական խորհրդակցութիւններ, չքաղութական խորհրդակցութիւններ, դպրոց, ընթերցարան— ահա այն լծակները, վորոնց միջոցով գյուղխորհուրդները մասսայական աշխատանք պետք է ծավալեն: Դրանք բոլորն այն միջոցներն են, վորով գյուղի բարտալն ու չքաղութը և միջակ գյուղացիութիւնը կարող են սովորել և հայտնաբերել իրենց ակտիվութիւնն ու ստեղծագործող յեռանդը:

Մասսայական աշխատանքների ամենաթուլ կողմը գյուղում—դա կանանց մեջ տարվելիք աշխատանքն է: Կանայք չափազանց թուլ են ընդգրկված գրեթե բոլոր մեր խորհրդային հիմնարկներում: Խորհուրդների և մյուս կազմակերպութիւնների մեջ քիչ ենք ընտրում կանանց, իսկ յեթե ընտրում ել ենք, չենք ստեղծում նրանց աշխատանքի համար նպաստավոր պայմաններ, թերազնահատում ենք նրանց ընդունակութիւնները, այն ինչ փորձը ցույց է տալի, վոր նրանք շատ անգամ տղամարդուց ել ավելի լավ ու բարեխիղճ են աշխատում: Կանանց մեջ տարվելիք աշխատանքի բացակայութիւնն է պատճառը, վոր կանայք շատ անգամ յենթարկվում են կուլակների պրովոկացիաներին և դեմ են լինում կոլեկտիվ մտնելուն: Գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի վրա պետք է առանձին ուշադրութիւն դարձնեն գյուղխորհուրդները: Առանձնապէս պետք է աշխուժացնել կուլտուր-

կենցաղային սեկցիաների և հիմնարկների (համայնա-
կան փոռեր, ճաշարաններ, մսուրներ, լվացքատներ,
բաղնիք և այլն) աշխատանքները, վորոնք մեծապես
կնպաստեն կանանց ազատագրմանը՝ տնային ծանր
աշխատանքներից:

Մասսայական աշխատանքի անհրաժեշտութիւնը
կարևոր է առաջիկա դարնան դշուղատնտեսական կամ-
պանիայի միջոցին: Գյուղխորհուրդները ամբողջ
դշուղացիութեան հասարակական ուշադրութիւն-
նը պետք է կենտրոնացնեն դարնանացանի վրա:
Յուրաքանչյուր դշուղացի լավ պետք է գիտե-
նա, թե ինչ խնդիրներ են դրվում իր առաջ: Կո-
լեկտիվացման հետագա զարգացումը, ցանքերի տա-
րածութեան ընդարձակումը, բերքատուութեան բար-
ձրացումը, անասնապահութեան զարգացումը— ներկա
պայմաններում, յերբ կուլակը կատարի դիմադրու-
թիւն և ցույց տալիս և դանադան ճարպիկ ու խարդախ
միջոցներով, սուտ լուրերով ու պրովոկացիաներով աշ-
խատում և խանդարել կամպանիայի հաջող ընթացքը,
դանանջում են կազմակերպել աշխատանքը դշուղա-
ցիութեան մեջ այնպիսի ձեւով, վորպեսզի չքափոր և
միջակ դշուղացիութիւնը լիովին գիտակից և կամպա-
նիայի ամբողջ նշանակութիւնն ու նրա հիմնական խն-
դիրները, կազմակերպել դշուղացիութեան պայքարը
ընդդէմ կուլակի:

Գարնանացանի ամբողջ պլանը պետք է ըննվի
դշուղխորհուրդներում, արտադրական խորհրդակցու-
թիւններում, չքափորական խորհրդակցութիւննե-
րում, հասարակական ժողովներում և այլն: Ամեն մի
տնտեսութիւն պետք է լավ գիտենա իր պլանը և
թիւի այդ պլանի իրագործմանը:

Մասսայական աշխատանքի ձեւերից մեկն էլ ու-
ղիալիստական մրցումն է, վորը խոշոր միջոց է մեր
աշխատանքների թափւր բարձրացնելու համար: Գոր-
ծարաններում քանվորները խոշոր հետնանքների յեն
հասել սոցմրցման միջոցով: Նրա ձեւերը պետք է
կիրառվեն նաեւ դշուղում: Սոցիալիստական մրցման
մեջ կարող են մտնել հարեւան դշուղերը, դշուղի մի
թաղը մյուս թաղի հետ, մի կոլխոզը մյուս կոլխոզի
հետ, վերջապէս անհատ տնտեսութիւնները՝ մյուս
անհատ տնտեսութեան հետ: Մրցում կարելի յե կազմա-
կերպել ցանքերն յափելացնելու, բերքատուութիւնը
բարձրացնելու, ագրոմիինմումը լիովին կիրառելու,
բանող անասուն չունեցող չքափորների կամ կարմիր
բանակայինների տնտեսութիւնների վարը հասարա-
կական միջոցներով կազմակերպելու, սերմացուն հար-
յուր տոկոսով դտելու և այլն և այլն: Բաժական է, վոր
այդ դադափազը ընդհանրաւոր և տարածվի, այնու-
հետեւ աշխատավորներն իրենք բաղմաթիւ ձեւեր կը-
հնարեն սոցիալիստական մրցման համար: Ռուսա-
տանի դշուղերում սոցմրցումը բաժական տարածված
է և այնտեղ՝ բաղմաթիւ ձեւերով աշխատավորութիւն-
նը մասնակցում է սոցմրցմանը:

Մասսայական աշխատանքները լավ կազմակերպե-
լով և սոցիալիստական մրցման ձեւերը կիրառելով
դշուղխորհուրդները մասնակից կանեն դշուղացիական
ամբողջ մասսային սոցիալիստական շինարարութեանը
և յերկրորդ՝ բայլեվիկյան դարնանացանին:

Գարնանացանի աշխատանքները կազմակերպելիս
դշուղխորհուրդները բացի կոլեկտիւ տնտեսութեան-
ներից, պետք է խոշոր ուշադրութիւն դարձնեն նաեւ

6. ՆՍԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՑԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԿԸ

անհատական չբավարարող ու միջակ տնտեսություններին ոգնելու հարցին: Անցյալ կամպանիայի ընթացքում շատ գյուղխորհուրդներ, սկզբում դրամվելով համատարածի չրջանի «դլխապտույտ» հաջողություններով, բոլորովին մոռացել էին անհատ չբավարարող ու միջակ գյուղացիներին ոգնելու գործը:

Քանի վոր գյուղացիական տնտեսությունների խոչոր մեծամասնությունը դեռ ևս կոլխոզներից դուրս է Հայաստանում, անհատական տնտեսությունները այս դարձան կամպանիայում դեռ խոչոր դեր են խաղալու ցանքերը լայնացնելու հարցում: Այս պատճառով ցանքի կազմակերպումը անհատական սեկտորում նույն պես գյուղխորհուրդների հիմնական աշխատանքներից մեկը պետք է լինի: Նրանք պետք է լայն մասսայական աշխատանք ծավալեն անհատ տնտեսատերերի շուրջը, կազմակերպեն նրանց ցանքը, ապահովեն սերմացվով, կազմակերպեն նրանց կորտնտեսության մեջ մտնելու համար:

Պետք է հսկել նաև, վոր կոլեկտիվ տնտեսությունների և նրանց առանձին անդամների վերաբերմունքը դեպի անհատ տնտեսությունները թշնամական չլինի: Այս բանը վորոշ տեղերում նկատվում է: Չպետք է հալածել չբավարարող կամ միջակ տնտեսատերին նրա համար, վոր նա կոլխոզ չի մտել: Հալածելով մենք նրան մեզանից հոացնում ենք, իսկ դրանից ոգտվում է կուլակը: Ընդհակառակը պետք է ամեն կերպ ոգնել և նայել նրանց վրա վորպես տնտեսատերերի, վորոնք այսօր չկան կոլխոզում, բայց վաղը լինելու յեն: Լավ վերաբերմունքով մենք նրանց կոլխոզ մտնելը կարողացնենք:

Գարնանացանի պլանի կատարումը հարյուր տոկոսով և նրա հաջող ավարտումը ամենից առաջ կախված է նրանից, թե վորքան մենք կկարողանանք լավ նախապատրաստվել այդ կամպանիայի համար: Գարնան կամպանիայի խոչոր ծրագրի իրագործումը պահանջում է խոչոր ինքնագործունեություն, մեծ յեռանդ, կազմակերպվածություն և միանգամայն դիտակից վերաբերմունք: Կան մտածողներ, թե ինչ կարիք կա ավելորդ աղմուկ բարձրացնելու, գարնանացան է ելի, գյուղացին են գլխից ցանել և ու հնձել, այժմ ել կցանի ու կհնձի: Այսպիսի մտածելակերպ ունեցողները ցանկանում են թուլացնել գարնանացանի թափը, ամեն ինչ թողնել ինքնահոսի: Անպլանայնությունը, կուլակին չնկատել և կոծկել դատակարարային պայքարը գյուղում, ասելով, թե՛ «մեր գյուղում կուլակ չկա» կամ «մեր գյուղի կուլակը լավ կուլակ է», հետևապես կարիք չկա ամբողջ թափով նախապատրաստել գարնանացանը. դա աչքի դեմեկակերպն է: Սոցիալիզմի կառուցումը պահանջում է պլանային աշխատանք և բայլչեվիկյան յեռանդ: Այս պատճառով գյուղխորհուրդները առաջին հերթին պետք է մշակեն իրենց աշխատանքի ծրագիրը և այժմյանից անցնեն նախապատրաստական աշխատանքների: Անցյալ գարնան կամպանիայի փորձից մենք դիտենք, թե ինչպես նախապատրաստական աշխատանքների բացակայությունը խանգարեց մեր բուն աշխատանքներին: Վորովհետև առաջուց չեյինք գտել սերմացուն, չեյինք պատրաստել գյուղատնտեսական գործիքները, հաշվի չեյինք

առեւ իմենող անասուններին և նրանց համար անհրա-
ժեշտ կերը և այլն, այդ պատճառով վարի ու ցանքի
աշխատանքները շատ տեղերում լրիվ չկատարվեցին։
Անցյալ փորձից պետք է դաս առնել։ Մենք պետք է
այս տարի բուն կամպանիային դիմավորենք լիովին
պատրաստված կերպով, վորպեսզի այնուհետեւ ըշ-
տապողական և պատահական բնույթ չկրեն վարի ու
ցանքի աշխատանքները։ Շտապողականութունն ու
պատահականութունը միատուժ են ամբողջ աշխա-
տանքը։ Նախապատրաստական աշխատանքները յետեւ
վաղորդ ձմեռվան ամիսներում կատարված լինեն,
այնուհետեւ դարնան ամիսները կգործադրենք անմիջա-
պես արտադրական աշխատանքների համար։ Այս աս-
պարիզում պատասխանատվութունն ընկնում է գյուղ-
խորհուրդների վրա։ Բավական չէ միայն ընդհանուր
ծրագրի ունենալ, այլ և պետք է հսկել, վոր ծրագիրը
իր ժամանակին կատարվի։ Այս պատճառով պետք է ու-
նենալ որացուցային ծրագիր, վորտեղ մանրամասն
նշանակված լինի, թե ինչ աշխատանք յերբ պետք է
սկսվի և յերբ պետք է վերջանա։

Ծրագրի մեջ պետք է ցույց տված լինի, թե ինչ
աշխատանք ով պետք է կատարի, վոր աշխատանքի
համար ով է պատասխանատու։ Գյուղխորհուրդը և
մասնավորապես նրա նախագահութունը պետք է
հսկեն, վորպեսզի աշխատանքները կատարվեն ժամա-
նակին, որացուցային ծրագրի համեմատ։ Պատաս-
խանատվության յենթարկեն թերացողներին։ Յուրա-
քանչյուր տասն ութ մեկ անգամ գյուղխորհուրդների
պլենար նիստերում պետք է լսել կոլլեկտիվների, արտա-
դրական խորհրդակցութւնների նախագահների,

պատասխանատու կատարողների և խորհրդի նախա-
գահների ղեկուցումները դարնանացանի ընթացիկ աշ-
խատանքների մասին։

Ծրագրի մեջ պետք է իրենց տրտահայտութւնը
դտնեն դարնանացանի բոլոր հարցերը—ցանքերի տա-
րածութւյան մանրամասն քանակը ըստ կոլտնտեսու-
թւնների, ավանային ընկերութւնների, անհատ
տնտեսութւնների, բերքատվութւյան բարձրացման
բոլոր միջոցները, դաշտերի պարարտացումն ու աղ-
բելը, շարքացանը, ագրոմիխիումն ու զոոմիխիումը,
սերմացուի ժամանակին գտումն և ախտահանումը,
հասարակական սերմֆոնդերի կազմակերպումը և մնա-
ցած բոլոր հարցերը։

Անհրաժեշտ է վաղորդ հաշվի առնել գյուղի բո-
լոր բանող անասունները, մշակել նրանց ոգտադործե-
լու յեղանակը, նախապատրաստել նրանց համար ան-
հրաժեշտ կերը։ Պետք է հաշվի առնել սերմացուն և
միջոցներ ձեռք առնել սերմացուի պակասը ժամանակին
ստանալու համար։ Պետք է հաշվի առնել գյուղատնտե-
սական գործիքները, ժամանակին ստանալ գյուղին
հատկացված գյուղգործիքները։

Կարեւոր հարցերից մեկն էլ գյուղատնտեսական
գործիքների նորոգման խնդիրն է։ Գյուղխորհուրդ-
ները ժամանակին պետք է հոգան նրանց նորոգման
մասին, այնտեղ, վորտեղ հնարավոր է, կազմակերպեն
փոքրիկ արհեստանոցներ, վաղորդ ձեռք բերեն գոր-
ծիքներ նորոգելու համար հարկավոր յերկաթը, ածու-
խը և այլն։

Հատուկ ուշադրութւն պետք է դարձնել անաս-
նապահութւյան դարգացման, տեխնիկական բույսերի և
մանաւանդ բամբակի ցանքերի վրա։ Ինչպես վերեւում

ՀՀ Ազգային գրադարան



NL0220770

չեչովեց, անասնապահութիւնը մեր յերկրում անբա-
վարար դրութեան մեջ է: Այս տարին պետք է բեկման
տարի լինի անասնապահութեան հարցում: Գյուղի ար-
տադրական պլանի մեջ պետք է նախատեսել անասնա-
պահութեան վերաբերյալ բոլոր հարցերը և բայձե-
վիկյան վճռականութեամբ կիրառել բոլոր միջոցները
անասնապահութեանը զարկ տալու համար:

Անցյալ տարի մենք չկատարեցինք բամբակի ցան-
քերի պլանը բավական մեծ տոկոսով: Սրա մեղաւոր-
ութիւնն ընկնում է մեր խորհրդային և կուսակցա-
կան մարմինների և առաջին հերթին գյուղխորհուրդ-
ների վրա: Գյուղխորհուրդները բամբակացան չըջան-
ներում չկարողացան ըմբռնել հարցի ամբողջ կարե-
ւորութիւնը: Այս տարի բամբակի հարցում ամենա-
վճռական բեկում պետք է կատարվի: Բամբակագոր-
ծական շրջանների գյուղխորհուրդները պետք է ըմ-
բռնեն, վոր աշխտեղ, վորտեղ հողը պետքական է բամ-
բակի համար, հացահատիկ կամ այլ մշակութ չպետք
է ցանվի: Սոցիալիստական պլանավորման ելակն
պայմանն է՝ ամեն մի տեղ, յերկրի ամեն մեկ մասում
զարգացնել այն կուլտուրան, վորը հարմար է տվյալ
վայրի հողային և կլիմայական պայմաններին: Գյուղ-
խորհուրդները այս տարի լիովին պատասխանատու
պետք է լինեն բամբակի ցանքադաշտերի պլանների
համար: Բամբակի պլանի վիժեցման մեջ այս տարի
խոշոր դեր խաղացին դաշնակ-կուլակային տարրերը:
Մեր մի շարք գյուղական խորհուրդները չկարողացան
ժամանակին արժանի հակահարված տալ կուլակ-դաշ-
նակցական տարրերին: 1931 թվի բամբակի պլանների
քրադործումը պահանջում է վորպեսզի խորհուրդները

ջախջախեն կուլակների և դաշնակների ընդմիջողու-
թիւնը, առաջ տանին բամբակագործութեան գործա-
ցումը:

Գարնան գյուղատնտեսական կամպանիայի կազ-
մակերպման և հաջող ավարտման պարտականութիւնը
և պատասխանատվութիւնը տվյալ գյուղում ընկնում
է գյուղխորհուրդների վրա: Նրանք պետք է այս տարի
ցուցաբերեն մեծ կազմակերպական շնորհք և խկա-
կան բայձեւիկյան գործունեութեան թափ ու յետանդ:

Կենտրոնացնելով գյուղացիական մասսաների ամ-
բողջ ուշադրութիւնը գյուղատնտեսական կամպա-
նիայի շուրջը, գլխավորելով ցանքի կազմակերպումը
կուլեկտիվ տնտեսութիւններում և անհատական հատ-
վածում, ապահովելով կոլտնտեսութիւններին և
անհատական, չքավոր ու միջակ տնտեսութիւնների
ոգնութիւնը սերմացուով, արտադրական գործիքնե-
րով և բանող անասուններով, յետանդուն պայքար մը-
ղելով կուլակի ու դաշնակի ստոր ազիտացիայի, պրո-
վոկացիայի դեմ, գյուղխորհուրդները կկարողանան
հաջողութեամբ կազմակերպել և ավարտել զարնանա-
ցանի աշխատանքները, վորոնք խոշոր զարկ պիտի տան
գյուղատնտեսութեան սոցիալիստական շինարարու-
թեանը:

Կազմակերպելով ու ղեկավարելով զարնանացանի
աշխատանքները, գյուղխորհուրդները վոչ մի րոպե
չպետք է մոռանան, վոր սոցիալիստական ծավալուն
արշավի և մասսայական կուլեկտիվացման հետեւանքով
տնտեսափոխորդն սրվում է դասակարգային պայ-
քաբը: Կուլակը կատաղի դիմադրում է կուլեկտիվին,
վորովհետեւ կուլեկտիվացումը նրան մահ է բերում:
Շատ անգամ կուլակը գործում է ծածուկ կերպով,

աշխատում է մասնիկ կալիսի, ներսից նրան քայքայե-
 լաւ նախառեղծով, ոգեւորում է շատ ճարպիկ կերպով մեր
 քործած տխալներից, աշխատում է իր կողմը գրավել
 միջակին և այդպիսով քայքայել նրա դաշինքը բանվոր
 դասակարգի հետ, ստահող լուրեր ե տարածում գյու-
 ղացիութեան հետամնաց խավերին իր կողմը գրավե-
 լու համար և այլն և այլն: Դասակարգային թշնամու-
 ադ բոլոր բացարձակ ու գողտնի դիմադրությունների
 դեմ գյուղատիրուրդը, վորպես պրոլետարական
 իշխանութեան ներկայացուցիչը գյուղում պետք է պայ-
 քարի և տպահովի գյուղի տնտեսական վերակա-
 ուցումը, բայց իշխան յերկրորդ զարնանացանի
 պլանների կադարումն ու դերակատարումը:



ԳԻՆԸ՝ 5 ԿՈՊ.